ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 27

Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)

(ՏԳՏԴ ծածկագիր՝ 85.10.0)

_____ _____ _____

(տեսչության տարածքային մարմնի անվանումը) (հասցեն) (հեռախոսահամարը)

_____ _____

(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____

(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____

(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ ավարտը՝ _____

_____ _____

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը) (ՀՎՀՀ-ն)

_____ _____

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

_____ _____

(տնտեսվարող սքուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	Այո	Ոչ	Չ/պ	Կշիռ	Հղում նորմատիվ ակտին	Ստուգման մեթոդ	Մեկնա-բանու-թյուն
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1.	Արդյո՞ք կազմակերպության խմբերում երեխաների ցուցակային թիվը համապատասխամում է տարիքային խմբերի համար սահմանված տեղերի քանակին:Նշում 1:				2	Հղում 1, կետ 1.3, աղյուսակ 1.	Վիզուալ զննում, փաստաթղթային	
2.	Արդյո՞ք կազմակերպության շինությունների (սենքերի) կազմն ու մակերեսները (մ^2) համապատասխանում են սահմանված պահանջներին: Նշում 2:				2	Հղում 1, կետ 1.4 աղյուսակ 2.	Վիզուալ զննում, փաստա-թղթային	
3.	Արդյո՞ք կազմակերպության հողամասի տարածությունը մեկ տեղի հաշվարկով համապատասխանում է սահմանված պահանջներին:				1	Հղում 1, կետ 2.1	Վիզուալ զննում, փաստա-թղթային	
4.	Արդյո՞ք կազմակերպության յուրաքանչուր խումբ ունի.					Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	ա/ առանձնացված խմբային հրապարակ,				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	բ/ հրապարակները ունե՞ն հարմար կապ շենքի համապատասխան խմբային սենյակների հետ.				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	գ/ մսուրային տարիքի երեխաների հրապարակները տեղակայվա՞ծ են այդ խմբերի սենյակների ելքերին մոտ,				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	դ/ խմբերի հրապարակները, բացի բաց արևահարող մասից՝ ունե՞ն ստվերածածկ մաս:				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	ե/ նախադպրոցական հասակի երեխաների խմբային հրապարակները բաժանված են խաղային և մարմնամարզային մասերի:				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	զ/ յուրաքանչուր խումբ հրապարակը ունի ստվերածածկ՝ արևից և տեղումներից պաշտպանվելու համար:				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	է/ խաղահրապարակների գույքը համապատասխանում է երեխաների տարիքինհասակին:				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	
	ը/ գույքի մակերեսը չունի սուր ծայրեր, անհարթություններ և դուրս եկած հեղույսներ (բոլտեր):				1	Հղում 1, կետ 2.2	Վիզուալ զննում,	

5.	Կազմակերպության տնտեսական հրապարակը.					Հղում 1, կետ 2.4	Վիզուալ զննում,	
	ա/ մեկուսացվա՞ծ է մյուս հրապարակներից,				1	Հղում 1, կետ 2.4	Վիզուալ զննում,	
	բ/ ունի՞ ամուր ծածկույթ,				1	Հղում 1, կետ 2.4	Վիզուալ զննում,	
	գ/ ունի՞ առանձին մուտք:				1	Հղում 1, կետ 2.4	Վիզուալ զննում,	
6.	Աղբահավաքատեղերը.					Հղում 1, կետ 2.5	Վիզուալ զննում,	
	ա/ տեղաբաշխվա՞ծ են տնտեսական հրապարակի վրա,				1	Հղում 1, կետ 2.5	Վիզուալ զննում,	
	բ/ ունեն՞ կափարիչ,				1	Հղում 1, կետ 2.5	Վիզուալ զննում,	
	գ/ տեղադրվա՞ծ են բետոնապատ կամ ասֆալտապատ հիմքի վրա,				1	Հղում 1, կետ 2.5	Վիզուալ զննում,	
	դ/ գտնվու՞մ են հիմնական մասնաշենքից 25 մետրից ոչ պակաս հեռավորության վրա:				1	Հղում 1, կետ 2.5	Վիզուալ զննում,	
7.	Արդյո՞ք կազմակերպության հողամասը ունի ցանկապատ:				1	Հղում 1, կետ 2.6	Վիզուալ զննում,	
8.	Արդյո՞ք շենքի ներսում և հողամասում ապահովվում է խմբերի, հատկապես մսուրային, առավել մեկուսացումը մեկը մյուսից և վարչատնտեսական մասից:				2	Հղում 1, կետ 3.2	Վիզուալ զննում,	
9.	Արդյո՞ք 90-ից ավել տեղ ունեցող մսուրմանկապարտեզի շենքի սննդի բլոկը, մեկուսարանը և լվացքատունը ունեն առանձին ելքեր դեպի հողամաս:				1	Հղում 1, կետ 3.2	Վիզուալ զննում,	
10.	Մսուրային հասակի երեխաների խմբային հատվածների տեղակայումը.					Հղում 1, կետ 3.4	Վիզուալ զննում,	
	ա) տեղակայված են առավելապես առաջին հարկում՝ առանձին մուտքով.				1	Հղում 1, կետ 3.4	Վիզուալ զննում	
	բ) ունի ընդունարան, խաղաճաշարան, ննջարան, զուգարան և բուֆետային մաս, բոլոր սենյակների հարմար կապ իրար հետ:				1	Հղում 1, կետ 3.4	Վիզուալ զննում,	
	գ) Վաղ տարիքի 1 խմբի ընդունարանում առանձնացվա՞ծ է տեղ մայրերի կողմից կրծքի երեխաներին կերակրելու համար:				1	Հղում 1, կետ 3.4	Վիզուալ զննում,	
11.	Միջին և ավագ մսուրային խմբերի համար զուգարաններում.					Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	
	ա/ դրվա՞ծ են մանկական լվացարան,				1	Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	
	բ/ դրվա՞ծ է 1 մեծահասակի զուգարանակոնք				1	Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	

	գ/ դրվա՞ծ է մանկական զուգարանակոնք (հիգիենիկ վրադիրով),				1	Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	
	դ/ դրվա՞ծ է ջրհոս հարմարանք, ջրացնցուղային տակնոց,				1	Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	
12.	Արդյո՞ք Կրտսեր 2-րդ և միջին խմբերում տեղադրված են մանկական լվացարան, մանկական զուգարանակոնք, միջնապատով առանձնացված խցիկներում ցնցուղի տակդիր, ճկուն փողրակով (շլանգ) ցնցուղ և սրբիչ:				3	Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	
13.	Առկա է մեծերի և նախապատրաստական խմբերը համար աղջիկների ու տղաների առանձին զուգարաններ, զուգարանակոնք, լվացարան, ջրացնցուղային տակնոց, սրբիչ:				3	Հղում 1, կետ 3.8	Վիզուալ զննում,	
14.	Կազմակերպությունները երաժշտական և մարմնամարզական դահլիճները.					Հղում 1, կետ 3.9	Վիզուալ զննում,	
	ա/ արդյո՞ք 95 և ավելի տեղ կազմակերպությունները ունեցող երաժշտական և մարմնամարզական դահլիճները պարապմունքների համար.				1	Հղում 1, կետ 3.9	Վիզուալ զննում,	
	բ/ դահլիճի մակերեսը 140 տեղի դեպքում - 75 մ^2 է՞,				1	Հղում 1, կետ 3.9	Վիզուալ զննում,	
	գ/ 140-190 տեղ դեպքում՝ 100 մ^2:				1	Հղում 1, կետ 3.9	Վիզուալ զննում,	
	դ/ 280-330 տեղով նախադպրոցական հիմնարկը ունի 2 դահլիճ՝ 100 և 50 մ^2 կամ յուրաքանչյուրը՝ 75 մ^2 մակերեսով:				1	Հղում 1, կետ 3.9	Վիզուալ զննում,	
	ե/ Դահլիճների հատակը ունենի ցածր ջերմահաղորդականությամբ ծածկ (մանրահատակ, տախտակ, տաք հենքով լինոլեում):				1	Հղում 1, կետ 3.9	Վիզուալ զննում,	
15.	Արդյո՞ք կազմակերպությունը հիվանդացած երեխաների համար ունի մեկուսարան իր հիվանդասենյակով (ոչ միջանցիկ), որը տեղակայված է առաջին հարկում և ունի առանձին ելք դեպի դուրս:				2	Հղում 1, կետ 3.10	Վիզուալ զննում,	
16.	Արդյո՞ք բժշկական սենյակների կազմը և մակերեսները համապատասխանում է սահմանված պահանջներին: Նշում 3:				2	Հղում 1, կետ 3.10 աղյուսակ 6.	Վիզուալ զննում,	
17.	Լվացքատան կառուցվածքը և				2	Հղում 1,	Վիզուալ	

	մակերեսը համապատասխանու՞մ է սահմանված նորմերին: Նշում 4:					կետ 3.13 աղյուսակ 9.	զննում,	
18.	Կեղտոտ սպիտակեղենի հանձնումը և մաքուրի ստացման մուտքերը (պատուհանները) առանձին են:				1	Հղում 1, կետ 3.13	Վիզուալ զննում,	
20.	Արդյո՞ք խոհանոցի, լվացքատան և զուգարանների պատուհանները տեղադրված չեն խմբասենյակների ու ննջարանների պատուհանների տակ:				1	Հղում 1, կետ 3.14	Վիզուալ զննում,	
21.	Արդյո՞ք սննդի կառույցահատվածի /ճաշարանի/, լվացքատան, արդուկի սենյակի և զուգարանների հատակները ծածկվա՞ծ են կերամիկական խճանկարային սալիկներով:				1	Հղում 1, կետ 3.14	Վիզուալ զննում,	
22.	Արդյո՞ք կազմակերպության հիմնական շինությունները ունե՞ն անմիջական բնական լուսավորում:				1	Հղում 1, կետ 4.1	Վիզուալ զննում,	
23.	Արդյո՞ք խմբասենյակներում, ննջարաններում, բժշկական սենյակում, մեկուսարանում, հիվանդասենյակում, մարմնամարզական և երաժշտական պարապմունքների դահլիճներում բնական լուսավորության գործակիցը /ԲԼԳ/ առնվազն 1 ,5% է:				1	Հղում 1, կետ 4.1	Վիզուալ զննում, Գործիքային չափումներ	
24.	Արդյո՞ք երկրորդ լույսով լուսավորումը առկա՞ է սանհանգույցում, ընդունարանում, հանդերձարանում:				1	Հղում 1, կետ 4.1	Վիզուալ զննում,	
25.	Միակողմանի լուսավորման դեպքում, պատուհաններից խմբասենյակների երկարությունը 6 մետրից պակաս է՞:				1	Հղում 1, կետ 4.2	Վիզուալ զննում,	
26.	Արդյո՞ք շիկացման լամպերի օգտագործման դեպքում լուսավորության մակարդակը 100 լյուքս է:				1	Հղում 1, կետ 4.3	Վիզուալ զննում, Գործիքային չափումներ	
27.	Կազմակերպության շենքը.					Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	
	ա/ ապահովվա՞ծ է ջրամատակարարման ներքին ցանցով՝				1	Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	
	բ/ ունի՞ տաք ջուր և կոյուղու համակարգ:				1	Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	
28.	Ոչ կոյուղացված շրջաններում կազմակերպությունը տեղային մաքման սարքավորումների կառուցման միջոցով ապահովվա՞ծ է ներքին կոյուղու համակարգով:				1	Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	
29.	Տաք ջրամատակարարմամբ.					Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	

	ա/ ապահովա՞ծ է՝ խոհանոցը, լվացքատունը, վաղ հասակի երեխաների (1-ին խումբ) խաղասենյակը,				1	Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	
	բ/ ապահովվա՞ծ են բոլոր խմբերի բուֆետային մասերը և սանհանգույցները՝ ծորակխառնիչների առկայությամբ:				1	Հղում 1, կետ 5.1	Վիզուալ զննում,	
30.	Կազմակերպության շենքը ապահովվա՞ծ է կենտրոնացված ջեռուցման և օդափոխության համակարգերով:				1	Հղում 1, կետ 5.2	Վիզուալ զննում,	
31.	Գյուղական բնակավայրերում մեկ հարկանի մսուր-մանկապարտեզների շենքերում (50 տեղից ոչ ավել) վառարանի բացվածքը փակվու՞մ է հերմետիկ դռնով, տեղադրվա՞ծ է միջանցքում և ոչ թե այն տարածքում, որտեղ երեխաներն են:				1	Հղում 1, կետ 5.2	Վիզուալ զննում,	
32.	Վառարանները վառվու՞մ են երեխաների բացակայությամբ և մարվու՞մ են երեխաների գալուց 1,5-2 ժամ առաջ:				1	Հղում 1, կետ 5.2	Վիզուալ զննում,	
33.	Այրվածքներից ու վնասվածքներից խուսափելու համար ջեռուցման սարքերը արտաքինից ծածկվա՞ծ են փայտյա ցանցաճաղով:				1	Հղում 1, կետ 5.2	Վիզուալ զննում,	
34.	Արդյո՞ք տարածքների օդի ջերությունը տարբերակվում է, կախված տարածքի օգտագործման նպատակներից երեխաների տարիքից: Նշում 5:				1	Հղում 1, կետ 5.3 աղյուսակ 11.	Վիզուալ զննում, Գործիքային չափումներ, Փաստա-թղթային	
35.	Փակ տարածքում երեխաների հագուստը, չափավոր շարժման ակտիվության դեպքում, կախված օդի ջերմաստիճանից, արդյո՞ք համապատասխանում է սահմանված պահանջներին: Նշում 6:				1	Հղում 1, կետ 5.4 աղյուսակ 12.	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
36.	Առաջին հարկում տեղակայված խաղասենյակներում և խմբասենյակներում հատակի մակերեսին ջերմաստիճանը ձմռան ընթացքում առնվազն 22^0 է՞:				1	Հղում 1, կետ 5.5	Վիզուալ զննում,	
37.	Հարաբերական խոնավությունը.					Հղում 1, կետ 5.6	Վիզուալ զննում, գործիքային չափումներ	

	ա/ երեխաների սենյակներում 40-55% է՞,				1	Հղում 1, կետ 5.6	Վիզուալ զննում, գործիքային չափումներ	
	ա/ խոհանոցում և լվացքատանը՝ 60-70% է՞:				1	Հղում 1, կետ 5.6	Վիզուալ զննում, գործիքային չափումներ	
38.	Երեխաների անընդհատ գտնվելու սենյակները (խմբասենյակ, խաղասենյակ, ննջասենյակ, երաժշտական և մարմնամարզական պարապմունքների սենյակ և այլն) ապահովվա՞ծ են թարմ մաքուր օդով՝ 1,5 օդափոխանակության հաճախականությամբ:				1	Հղում 1, կետ 5.7	Վիզուալ զննում,	
39.	Կազմակերպության սարքավորումները համապատասխանու՞մ են երեխայի տարիքային և հասակային առանձնահատկություններին:				2	Հղում 1, կետ 6.1	Վիզուալ զննում,	
40.	Խմբասենյակներում և խաղասենյակներում տեղադրվա՞ծ են տվյալ խմբի երեխաների քանակության համապատասխան սեղաններ և աթոռներ:				1	Հղում 1, կետ 6.2	Վիզուալ զննում,	
41.	Արդյո՞ք երեխաների համար սեղանների և աթոռների չափսերը համապատասխանում են սահմանված չափանիշներին: Նշում 7				2	Հղում 1, կետ 6.3 աղյուսակ 13	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
42.	Աթոռները սեղանի հետ խմբավորված և մակնիշավորված են:				1	Հղում 1, կետ 6.4 աղյուսակ 14	Վիզուալ զննում,	
	ա/ Սեղանների կողմնորոշիչ քանակը (համարիչ) և աթոռների (հայտարար) չափսերը տարբեր հասակային խմբերի համար համապատասխանու՞մ են սահմանված պահանջներին: Նշում 8				1	Հղում 1, կետ 6.4 աղյուսակ 14	Վիզուալ զննում,	
43.	Երեխաների նստեցումը սեղան աթոռներին կատարվու՞մ է հաշվի առնելով նրանց առողջական վիճակը, տեսողությունը և լսողությունը:				1	Հղում 1, կետ 6.5	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
	Վաղ հասակի 1-ին խմբի գույքը.					Հղում 1, կետ 6.5	Վիզուալ զննում,	
44.	ա/ լվացարանի մոտ տեղադրվա՞ծ է բարուրի սեղան, սրբիչների կախիչներ, կեղտոտ սպիտակեղենի տարողություն,				1	Հղում 1, կետ 6.5	Վիզուալ զննում,	

	դ/ Երեխաներին կերակրելու համար տեղադրվա՞ծ են 2 տեղանի սեղաններ:				1	Հղում 1, կետ 6.5	Վիզուալ զննում,	
45.	Մանկական խմբերի զուգարաններում տեղադրվա՞ծ են պատի կամ կախովի կախիչներ՝ անձնական բաժիններով, անձնական հիգիենայի առարկաների և սրբիչների համար՝ տնտեսական պահարաններ, մսուրային խմբերում՝ առանձին խցիկներով պահարաններ՝ գիշերանոցների համար:				1	Հղում 1, կետ 6.6	Վիզուալ զննում,	
46.	Վնասվածքից /տրավմայից/ խուսափելու համար բոլոր մանկական անշարժ սարքավորումները ամրացվա՞ծ են:				1	Հղում 1, կետ 6.6	Վիզուալ զննում,	
47.	Տարածքների լիարժեք մաքրումը կատարվու՞մ է ամեն ամիս և համաճարակային ցուցումով՝ հատակի լվացուվոմ, լուսատուների, պատուհանների, դռների, պատուհանների լվացում մաքրող և վարակազերծող նյութերով:				1	Հղում 1, կետ 7.1	Վիզուալ զննում,	
48.	Արտաձիգ օդափոխիչ համակարգի երկաթյա վարագույրները բաց են՞, մշտապես մաքրվու՞մ են փոշուց, փակվու՞մ են շինության ներքին ջերմաստիճանի և դրսի ջերմաստիճանի կտրուկ անկման ժամանակ:				1	Հղում 1, կետ 7.1	Վիզուալ զննում,	
49.	Խմբերի գործունեության ընթացքում բացառված է ընթացիկ կամ կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ պատերի և առաստաղի սպիտակեցում, պատուհանների վերանորոգում:				1	Հղում 1, կետ 7.1	Վիզուալ զննում,	
50.	Բոլոր ձեռք բերված խաղալիքները (բացառությամբ փափուկ խաղալիքների) մինչև խմբերին հանձնելն հոսող ջրի տակ (37^0 C) օճառով լվացվու՞մ են:				1	Հղում 1, կետ 7.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
51.	Վաղ հասակի 1-ին խմբի խաղալիքներն լվանու՞մ են օրը 2 անգամ՝ տաք ջրով, խոզանակով, օճառով կամ 2%-ng սննդային սոդայի լուծույթով՝ մակնշված թասերում, որից հետո լվանվու՞մ են հոսող ջրի տակ (37^0 C) և չորացվում:				1	Հղում 1, կետ 7.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
52.	Փափուկ խաղալիքներն ամեն օր օրվա վերջում վարակազերծվու՞մ են բակտերիոցիդ լամպերով, 40 րոպե՝ տեղակայվում են լամպից 25սմ հեռավորության վրա:				1	Հղում 1, կետ 7.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	

53.	Ամբողջ սպիտակեղենը մակնշվա՞ծ է, անկողնային սպիտակեղենը, մակնշվա՞ծ է ստորին անկյունում:				1	Հղում 1, կետ 7.3	Վիզուալ զննում,	
54.	Հաստատությունը ունի՞ սպիտակեղենի 3 կոմպլեկտ և ներքնակների 2 փոխնորդ:				1	Հղում 1, կետ 7.3	Վիզուալ զննում,	
55.	Սպիտակեղենի և սրբիչների փոխարինումը կատարվու՞մ է ելնելով աղտոտվածությունից և առնվազն շաբաթը 1 անգամ:				1	Հղում 1, կետ 7.4	Վիզուալ զննում,	
56.	Անկողնային պարագաները՝ ներքնակներ, բարձեր, վերմակներ, քնապարկեր, ենթարկվում են օդափոխության անմիջապես ննջարաններում՝ բաց պատուհանների պայմաններում, իսկ լիարժեք մաքրման ժամանակ՝ պարբերաբար դուրս հանելով են:				1	Հղում 1, կետ 7.4	Վիզուալ զննում,	
57	Խմբասենյակների գորգերը. ա/ ամեն օր մաքրվու՞մ են փոշեկուլով,				1	Հղում 1, կետ 7.5	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
58.	Երեխաների բարուրման սեղանները, մանկական տակդիր մոմլաթները, արենաների ծածկոցը, բլուրները, լվանու՞մ են ջրով և օճառով՝ օրը 2 անգամ (ճաշից հետո և օրվա վերջում), արտաթորանքներով աղտոտվելու դեպքում՝ թրջում 1%-ոց քլորամինի լուծույթով, օգտագործած իրերը վարակազերծվում են 1%-ոց քլորամինի լուծույթով՝ 4 ժամ տևողությամբ, հատուկ առանձնացված ամաններում:				1	Հղում 1, կետ 7.5	Վի զուալ զննում, Փաստաթղթային	
59.	Կազմակերպության զուգարանների մաքրումը.					Հղում 1, կետ 7.6	Վիզուալ զննում,	
	ա/ հատակը, նստակոնքերը լվանու՞մ են օրը 2 անգամ հոսող տաք ջրով, օգտագործելով լվացող նյութեր:				1	Հղում 1, կետ 7.6	Վիզուալ զննում,	
	բ/ նստակոնքը միզաթթվային աղերից ազատելու համար ամիսը 2 անգամ լվանու՞մ են սանիտարական նյութով, դրա բացակայության դեպքում՝ աղաթթվի 2 %-ոց ուծույթով:				1	Հղում 1, կետ 7.6	Վիզուալ զննում,	
60.	Մսուրային խմբերում հատակը լվացվու՞մ է երեխաների յուրաքանչյուր գիշերանոթին նստելուց հետո:				1	Հղում 1, կետ 7.6	Վիզուալ զննում,	
61.	Խմբասենյակների սեղանները նախքան սնունդ ընդունելը և հետո				1	Հղում 1, կետ 7.7	Վիզուալ զննում,	

	լվացվո՞ւմ են տաք ջրով, օճառով, հատուկ լաթերով, որոնք լվացվում, չորացվում և պահվում են չոր վիճակում կափարիչով փակվող հատուկ ամանների մեջ:							
62.	Համաճարակային իրավիճակի բարդացման դեպքում ամենօրյա խոնավ մաքրումը կատարվո՞ւմ է վարակազերծող նյութերի օգտագործմամբ (1%-ոց քլորամինի, 1 %-ոց քլորակրի լուծույթով):				1	Հղում 1, կետ 7.7	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
63.	Համաճարակային իրավիճակի բարդացման դեպքում սեղանները և աթոռները լվացվո՞ւմ են քլորակրի 1 %-ոց լուծույթով, հետո տաք ջրով և չորացվում:				1	Հղում 1, կետ 7.7	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
64.	Համաճարակային իրավիճակի բարդացման դեպքում խաղալիքներն ախտահանվո՞ւմ են 0.5%-ոց քլորամինի և 0.5%-ոց քլորակրի լուծույթով՝ 30 րոպե տևողությամբ, հետո լվացվում և չորացվում:				1	Հղում 1, կետ 7.7	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
65.	Զուգարանների նստակոնքերի.					Հղում 1, կետ 7.8	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
	ա/ նստատեղերն ամեն օր լվացվո՞ւմ են տաք օճառաջրով:				1	Հղում 1, կետ 7.8	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
	բ/ գիշերանոթները յուրաքանչյուր օգտագործումից հետո լվացվո՞ւմ են հոսող ջրով,				1	Հղում 1, կետ 7.8	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
	գ/ համաճարակային իրավիճակի բարձրացման դեպքում, 30 րոպեի ընթացքում մշակվում են 1 %-ոց քլորամինի կամ 1%-ոց քլորակրի լուծույթով:				1	Հղում 1, կետ 7.8	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
66.	Կոյուղու բացակայության դեպքում արտաթորանքների համար առկա՞ է կափարիչով դույլ քլորակրի պարզեցված լուծույթի համար կամ ուրիշ ախտահանիչ լուծույթի համար տարողություն՝ գիշերանոթներն ախտահանումից հետո լվանալու համար, մաքուր ջրով դույլ:				1	Հղում 1, կետ 7.8	Վիզուալ զննում,	
67.	Զուգարանների մաքրող պարագաները (լաթեր, դույլ, խոզանակ) ունե՞ն վառ գույներով				1	Հղում 1, կետ 7.9	Վիզուալ զննում,	

	համապատասխան մակնշումներ և պահպանվու՞մ են զուգարաններում տեղադրված հատուկ պահարաններում:							
68.	Ամբողջ մաքրող պարագաները օգտագործումից հետո լվանո՞ւմ են տաք ջրով և լվացող նյութերով: Ախտահանող լուծույթները պահվում են մուգ անոթներում, երեխաներին անհասանելի տեղերում:					Հղում 1, կետ 7.9	Վիզուալ զննում,	
69.	Սննդի բլոկի, լվացքատան, զուգարանների և այլ պատուհանները, տաք եղանակին պատվա՞ծ են մետաղյա ցանցերով				1	Հղում 1, կետ 7.10	Վիզուալ զննում,	
70.	Կոյուղու բացակայության դեպքում.					Հղում 1, կետ 7.11	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
	ա/ հորատիպ զուգարանների և աղբամանների 2/3 լցվելու դեպքում մաքրվու՞մ են և ամեն օր մշակվու՞ն են 10%-ոց քլորակրի լուծույթով,				1	Հղում 1, կետ 7.11	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
	բ/ շաբաթը 1 անգամ՝ ծածկվուն են քլորակրով (ելնելով 1կգ 1մ^2 մակերեսի հաշվարկից) կամ լավրիցիտով:				1	Հղում 1, կետ 7.11	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
71.	Բակային զուգարանների ներքին մակերեսը և դռների բռնակները ամեն օր լվանու՞մ են քլորամինի 1 %-ոց կամ քլորակրի պարզեցված 1%-ոց լուծույթներով:				1	Հղում 1, կետ 7.11	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
72.	Օդային բարվոք միջավայր ստեղծելու համար ամեն օր օդափոխվու՞մ է ամբողջ շինությունը:				1	Հղում 1, կետ 8.1	Վիզուալ զննում,	
73.	Օդափոխության տևողությունը կախված է արտաքին օդի ջերմաստիճանից, քամու ուղղությունից, ջերմամատակարարման համակարգի արդյունավետությունից և դադարեցվում է երեխաների խնբասենյակ վերադառնալուց 30 րոպե առաջ:				1	Հղում 1, կետ 8.2	Վիզուալ զննում,	
74.	Ննջասենյակները և պատշգամբները ունե՞ն արևապաշտպան հարմարանքներ (վարագույրներ, ժալյուզներ և այլն):				1	Հղում 1, կետ 8.2	Վիզուալ զննում,	
75.	Օդի ջերմային հսկողությունը կատարվում է կենցաղային ջերմաչափերի միջոցով, որոնք ամրացվա՞ծ են սենյակների ներքին				1	Հղում 1, կետ 8.3	Վիզուալ զննում, Գործիքային չափումներ,	

	պատին, հատակից 0,8-1,2 մ բարձրության վրա, (կախված երեխաների հասակից):						Փաստաթղթային	
76.	Երեխաների առողջարարական բարձր արդյունավետությունը ապահովելու համար.զբոսանքը մաքուր օդում կատարվում է օրը երկու անգամ՝ մանկապարտեզի ուսուցման և դաստիարակման ծրագրին համապատասխան:				1	Հղում 1, կետ 8.4	Վիզուալ զննում,	
77.	Արդյո՞ք պահպանվում են զբոսանքի ժամանակ երեխաների շարժման ակտիվությունը, ռացիոնալ հագուստի պայմաններում: Նշում 9:				1	Հղում 1, կետ 8.4.2 աղյուսակ 16.	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
78.	Նախադպրոցական հաստատության անձնակազմը հաճախու՞մ է աշխատանքավայրը մաքուր և կոկիկ հագուստով ու կոշիկներով:				1	Հղում 1, կետ 10.1	Վիզուալ զննում,	
79.	Աշխատանքը սկսելուց առաջ հաստատության աշխատողը լվանու՞մ է ձեռքերը, հագնու՞մ է մաքուր խալաթ կամ հատուկ զգեստ, հատուկ փոխնորդ կոշիկներ, մազերը կոկիկ հավաքու՞մ է գլխաշորի տակ:				1	Հղում 1, կետ 10.1	Վիզուալ զննում,	
80.	Տեխնիկական անձնակազմը հագնու՞մ է առանձին խալաթ՝ տարածքները մաքրելու համար և մաքուր գոգնոց՝ կերակուրը բաժանելու համար:				1	Հղում 1, կետ 10.1	Վիզուալ զննում,	
81.	Զուգարանը մտնելուց առաջ հանվու՞մ է խալաթը, իսկ դուրս գալուց հետո ձեռքերը լավ լվանվու՞մ են օճառով:				1	Հղում 1, կետ 10.1	Վիզուալ զննում,	
82.	Հաստատության անձնակազմը սահմանված ժամկետներում անցնու՞մ է բժշկական զննություն: Նշում 11:				1	Հղում 1, կետ 10.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
83.	Բոլոր աշխատողները, որոնք գործ ունեն երեխաների սպասարկման ու սննդի պատրաստման հետ անցնու՞մ են հիգիենիկ ուսուցման դասընթացներ:				1	Հղում 1, կետ 10.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
84.	Սննդի կառույցահատվածի բոլոր աշխատողները ամեն օր զննվու՞մ են բուժքրոջ կողմից՝ թարախային հիվանդությունների առկայության նկատմամբ և արդյունքները գրանցվու՞մ են հատուկ մատյանում:				1	Հղում 1, կետ 10.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
85.	Մինչև հաստատության երեխայի ընդունվելը առողջական վիճակի շեղումներ հայտնաբերելու նպատակով կատարվու՞մ են երեխայի բերանի խոռոչի, քիթ				1	Հղում 1, կետ 11.1	Վիզուալ զննում, Փաստաթղթային	

	ըմպանի, տեսողության խանգարման, ակնոցի ընտրության և այլ բուժական, ինչպես նաև առողջարարական միջոցառումներ:							
86.	Նախադպրոցական այլ հաստատությունից երեխաների տեղափոխման ժամանակ, մանկական կազմակերպություն հաճախող բժշկի կամ տեղամասային մանկաբույժի կողմից կազմվու՞մ է զարգացման պատմության քաղվածք:				1	Հղում 1, կետ 11.1	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
87.	Երեխային ընդունվելիս բժիշկը, որը կատարում է տվյալ հիմնարկի հսկողությունը, ծնողներից հավաքու՞մ է լրացուցիչ տվյալներ երեխայի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:				1	Հղում 1, կետ 11.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
88.	Երեխայի ընդունման ժամանակ հավաքած բոլոր տվյալները անցկացվու՞մ է երեխայի զարգացման պատմության մեջ, մսուրային հասակի երեխների համար՝ հաշվառման քարտում կամ երեխայի բժշկական քարտում, իսկ նախադպրոցական հասակի երեխաների համար հաշվառման քարտում և հասցվում է ի գիտություն խմբերի դաստիարակներին:				1	Հղում 1, կետ 11.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
89.	Երեխաների առավոտյան ամենօրյա ընդունումը կատարվու՞մ է դաստիարակի կողմից, որը ծնողներին հարցնու՞մ են երեխայի առողջական վիճակի մասին, զննու՞մ են բկանցքը և մաշկը, չափո՞ւմ են մսուրային խմբի բոլոր երեխաների ջերմությունը, իսկ նախադպրոցական խմբում՝ ելնելով բժշկական ցուցումից:				1	Հղում 1, կետ 11.3, Հղում 3, կետ 62	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
90.	Առավոտյան զննման ժամանակ հայտնաբերված հիվանդ և կասկածելի երեխաները չե՞ն ընդունվում, օրվա ընթացքում հայտնաբերված վատառողջ երեխաները մեկուսացվու՞մ են մեկուսարաններում կամ հիվանդացած երեխաների մեկուսացման սենյակում:				1	Հղում 1, կետ 11.3, Հղում 3, կետ 62	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
91.	Համաձայն գործող հրահանգների, անցկացվում են սանիտարա-հակահամաճարակային միջոցառումներ, որոնք ուղղված են վարակիչ հիվանդությունների				1	Հղում 1, կետ 11.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	

	կանխարգելմանը խմբերում կամ խմբերից դուրս կախված վարակի բնույթից, տարածման ձևից, կարանտին, ախտահանում, պատվաստումներ և այլն, համաձայն համաճարակաբանի ցուցման:							
92.	Կրած հիվանդություններից հետո հաստատություն երեխաները ընդունվո՞ւմ են տեղամասային մանկաբույժի կամ ընտանեկան բժշկի եզրակացությամբ:				1	Հղում 1, կետ 11.4	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
93.	Հաստատության երեխաները ապահովվա՞ծ են անհատական անկողնային պարագաներով, սրբիչներով, անձնական հիգիենայի պարագաներով (ատամի խոզանակ, սանր, սպունգ և այլն), դրանք մակնշվա՞ծ են:				1	Հղում 1, կետ 11.5	Վիզուալ զննում,	
94.	Օրվա ռեժիմը համապատասխանու՞մ է քնի տևողության, տարբեր խմբային հասակի երեխաների առույգության հիգիենիկ նորմերին, նախատեսվու՞մ է մաքուր օդում գտնվելու բավարար տևողություն, որի ժամանակ իրականացվու՞մ են առողջարարական և կանխարգելիչ միջոցառումներ, կազմակերպու՞մ են պարապմունքներ, դրանք ընդգրկվու՞մ են մտավոր և ֆիզիկական բեռնվածության ռացիոնալ համակցությունը:				1	Հղում 1, կետ 12.1	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
95.	Բոլոր խմբերում պարապմունքների ընթացքում անցկացվու՞մ են մարմնամարզական վարժություն՝ 1.5-2 րոպե տևողությամբ:				1	Հղում 1, կետ 12.1	Վիզուալ զննում,	
96.	Պարապմունքների միջև եղած ընդմիջումները կազմու՞մ են 10-12 րոպե: Ընդմիջումների ընթացքում անցկացվու՞մ են չափավոր ակտիվությամբ աշխույժ խաղեր:				1	Հղում 1, կետ 12.1	Վիզուալ զննում,	
97.	Պարապմունքների դասացուցակը կազմելիս. ա/ պլանավորվու՞մ է ուսումնական բռնվածության հավասարաչափ բաժանում՝ ողջ օրվա, շաբաթվա և տարվա ընթացքում,				1	Հղում 1, կետ 12.2	Վիզուալ զննում,	
	բ/ ուսումնական շաբաթվա սկզբում և վերջում նախասիրություն տրվու՞մ է ավելի թեթև՝ բովանդակությամբ և բարդությամբ պարապմունքներին,				1	Հղում 1, կետ 12.2	Վիզուալ զննում,	

	գ/ սկսած միջին խմբի երեխաներից ընձեռնվու՞մ են արձակուրդներ՝ համաձայն մանկապարտեզներում ուսուցման և դաստիարակման տիպային ծրագրերի:				1	Հղում 1, կետ 12.2	Վիզուալ զննում,	
98.	Ուսումնական տարվա սկզբին նախապատրաստական խմբում որոշվու՞մ է ուսուցմանը երեխաների ֆունկցիոնալ պատրաստականությունը:				1	Հղում 1, կետ 12.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
99.	Այն երեխաների համար, որոնք ուսուցմանը ֆունկցիոնալ պատրաստ չեն և ունեն ձայնային արտահայտության թերություններ, մանկապարտեզի ռեժիմում նախատեսվու՞մ են հատուկ պարապմունքներ լոգոպեդի հետ, դաստակի փոքր մկանների թույլ զարգացում ունեցող երեխաների համար՝ մկանների զարգացման հատուկ վարժություններ, առողջական վիճակի շեղումներ ունեցող երեխաներին՝ անհրաժեշտ բուժական և առողջարարական միջոցառումներ:				1	Հղում 1, կետ 12.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
100	Շարժունակության ռեժիմը ապահովու՞մ է ֆիզիկական դաստիարակության հիմնական խնդիրներով՝ ամենօրյա ֆիզիկական վարժությունների պարապմունքներ, տարբեր տիպի խաղեր (դաստիարակի ղեկավարությամբ), երեխաների ինքնուրույն շարժուն գործունեություն:				1	Հղում 1, կետ 14.1	Վիզուալ զննում,	
101.	Ֆիզիկական դաստիարակության պարապմունքների տեսակները և աշխատանքների ձևերը իրականացվու՞մ են սահմանված պահանջներին համապատասխան: Նշում 10:				1	Հղում 1, կետ 14.1 աղյուսակ 17	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
102.	Ֆիզիկական դաստիարակության նկատմամբ ապահովու՞մ է բժշկական և մանկավարժական հսկողություն:				1	Հղում 1, կետ 14.2	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
103.	Երեխաների ֆիզիկական զարգացման, ֆիզիկական դաստիարակության միջոցների ազդեցության արդյունավետությանը գնահատումը իրականացվու՞մ է բժշկի կողմից (մանկական հիմնարկներում կամ պոլիկլինիկաներում):				1	Հղում 1, կետ 14.2.1	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
104.	Բժշկամանկավարժական				1	Հղում 1, կետ	Վիզուալ	

	հսկողությունը, այդ թվում շարժման ռեժիմի կազմակերպման, ֆիզիկական վարժությունների անցկացման մեթոդիկայի և երեխայի օրգանիզմի վրա դրանց ազդեցության նկատմամբ միջոցառումների հսկողությունն իրականացնու՞մ են բժիշկի (բուժքրոջ) և մանկապարտեզի վարիչի կողմից:					14.2.2	զննում, Փաստաթղթային	
105.	Ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ երեխաների և ծնողների հետ հիգիենիկ գիտելիքների քարոզչության աշխատանքները և ուսուցումը անցկացնու՞մ են բուժքույրը, բժիշկը, վարիչը և դաստիարակները:				1	Հղում 1, կետ 14.2.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
106.	Հաստատությունում երեխաների կոփումը բաղկացա՞ծ է միջոցառումների համակարգից, ներառյալ ամենօրյա կյանքում կոփման էլեմենտները և հատուկ միջոցառումներից՝ օդային վաննաներ, ջրային պրոցեդուրաներ, ճիշտ կազմակերպված զբոսանք, ֆիզիկական վարժություններ, դրանք անցկացվու՞մ են թեթև սպորտային հագուստով և բաց օդում:				1	Հղում 1, կետ 14.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
107.	Կոփման միջոցառումների արդյունավետության բարձրացման համար դրանք անցկացվու՞մ են երեխաների օրգանիզմի ջերմաստիճանի ջերմային կոնֆորտի վիճակում հագուստի ջերմապահպանության հատկության ռացիոնալ համակցությամբ շինության ջերմատիճանի հետ և բացօթյա:				1	Հղում 1, կետ 14.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
108.	Արտաքին միջավայրի ազդակները (արև, օդ և ջուր) կոփման համակարգում օգտագործվու՞մ են տարբերակելով՝ կախված երեխայի տարիքից, առողջական վիճակից ի նկատի ունենալով հիմնարկության նյութական բազան և անձնակազմի պատրաստվածությունը: Կոփման մեթոդները ու միջոցները փոփոխվու՞մ են, հաշվի առնելով տարվա եղանակը, շինության ջերմասոտիճանը, խմբում համաճարակային իրավիճակը:				1	Հղում 1, կետ 14.3	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
109.	Կոփման միջոցառումների				1	Հղում 1, կետ	Վիզուալ	

	անցկացման ժամանակ ապահովվու՞մ են բոլոր սանիտարահիգիենիկ պայմանները և ունենանլով թեթև պոլիէթիլենային մակնշված բաքեր (2 հատ), 0.5լ տարողությամբ պոչամաններ՝ ջրով նախակոփման համար, 2-2.5լ տարողությամբ սափոր կամ ցնցուղ ջրով՝ ընդհանուր նախակոփման համար, փայտյա կամրջակներ, անհատական մակնշված սրբիչներ՝ բաց օդում և ֆիզկուլտուրայի դահլիճում պարապմունքների համար հագուստ:					14.3	զննում, Փաստաթղթային	
110.	Նախադպրոցական հասակի երեխաների հիգիենիկ ուսուցումն ու դաստիարա կությունը իրականացվու՞մ է սիստեմատիկ, հաշվի առնելով երեխաների հոգեկան և ֆիզիկական զարգացումը, զարգացող օրգանիզմի հիմնական ֆունկցիաների կարգավորումը:				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
111.	Իրականացվու՞մ է նախադպրոցականների հիգիենիկ դաստիարակության և ուսուցման հիմնական ձևը՝ պրակտիկ գործունեությունը				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում, Փաստաթղթային	
112.	Հիգիենիկ դաստիարակության մեջ լայնորեն ներգրավա՞ծ են ծնողները, որոնք տեղեկացվա՞ծ են մանկական հիմնարկում, նաև տանը աշխատանքների կազմակերպմանը և բնույթին՝ վարքի նորույթների ամրապնդման վերաբերյալ:				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում, Փաստա-թղթային	
113.	Երեխաներին սովորեցնու՞մ են լվացվել և ոտքերը լվանալ: Ատամների մաքրման կԱյուն սովորության ձևավորման նպա-տակով յուրաքանչյուր օր շուրջօրյա խմբերում իրականացվու՞մ է առավոտյան լվացման արարողակագը, իսկ ցերեկային խմբերում՝ ճաշից հետո: 2 տարեկան երեխաներիատամները մաքրու՞մ են խոնավացրած խոզանակով, իսկ 3 տարեկանից՝ օգտագործում են մածուկ:				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում, Փաստա-թղթային	
114.	Հիգիենիկ պրոցեդուրաներ. իրականացումը.					Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում,	
	ա) ատամի խոզանակները պահվու՞մ են անհատական բաժակներում,				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում,	
	բ) հիգիենիկ պրոցեդուրաները իրականացնելու համար (խոզանակ-				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում,	

	ներ, սանրեր) երեխաներին սովորեցնու՞մ են օգտվել անհատական իրերից:						Փաստա-թղթային	
115.	Սպունգները (երեխաների քանակին համապատասխան) օգտագործումից հետո թրջվում է 1 %-ոց քլորամինի լուծույթում՝ 15 րոպե, լվացվում են հոսող ջրով, չորացվում և պահվում են կտորե մաքուր պարկերում:				1	Հղում 1, կետ 15.1	Վիզուալ զննում, Փաստա-թղթային	
116.	Հաստատության բուժաշխատողները տիրապետում են առանձին վարակիչ հիվանդությունների դեպքերի ստանդարտ բնորոշումներին				2	Հղում 2, կետ 5	Փաստա-թղթային և Հարցուփորձ	
117.	Հաստատության բուժաշխատողները տիրապետում են արձանագրած վարակիչ հիվանդությունների դեպքերի մասին ընթացիկ կամ արտահերթ համակարգով տեղեկատվության ներկայացմանը, համապատասխանաբար՝ Տեսչության տարածքային մարմիններին և Տեսչության կենտրոնական ապարատ				3	Հղում 2, կետ 3	Փաստա-թղթային և Հարցուփորձ	
118.	Հաստատության բուժաշխատողները տիրապետում են առանձին վարակիչ հիվանդությունների (հաստատված և/կամ կասկածելի) դեպքերի վերաբերյալ շտապ հաղորդումների ընթացակարգին ՀՀ ԱՆ տեսչության Երևան քաղաքի տարածքային և մարզային կենտրոններին				1	Հղում 2, կետ 5	Փաստա-թղթային և Հարցուփորձ	
119.	Վարակիչ հիվանդությունների դեպքերն անհատապես հաշվառվու՞մ են «Վարակիչ, այդ թվում՝ մակաբուծային հիվանդությունների հաշվառման մատյանում» (հավելված 12), հաստատված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 21-Ն «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողություն» N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոններով և նորմերով				3	Հղում 2, կետ 14	Փաստաթղթային Վիզուալ զննում	

120.	«Վարակիչ, այդ թվում՝ մակաբուծային հիվանդությունների հաշվառման մատյանում» գրանցված դեպքերի վերաբերյալ ժամանակին (անմիջապես էլեկտրոնային ձևաչափով կամ հեռախոսով կամ ֆաքսով, այնուհետև 24 ժամվա ընթացքում) տրվե՞լ են շտապ հաղորդումներ ՀՀ ԱՆ տեսչության Երևան քաղաքի տարածքային և մարզային կենտրոններին				2	Հղում 2, կետ 5	Փաստաթղթային Վիզուալ զննում	
121.	ՆՈՒՀ-ում նախորոք որոշվա՞ծ են այն տարածքները, որտեղ մեկուսացվում են վարակիչ հիվանդության կասկածով հիվանդները:				1	Հղում 3, կետ 59	Փաստաթղթային Վիզուալ զննում	
122.	Բացառվա՞ծ է այդ տարածքների օգտագործում այլ նպատակների համար, բացառվա՞ծ է տարանցիկությունը:				1	Հղում 3, կետ 59	Փաստաթղթային Վիզուալ զննում	
123.	Գրիպի սեզոնային բարձրացումների կամ համաճարակային իրավիճակի ժամանակ հիվանդ երեխաները և անձնակազմի անդամները մեկուսացվու՞մ են՝ հատկապես ռիսկի խումբ հանդիսացող երեխաներից և անձնակազմի անդամներից (շնչառական, սիրտ-անոթային համակարգի և այլ խրոնիկ հիվանդություններով տառապող անձինք):				1	Հղում 3, կետ 57	Փաստաթղթային Վիզուալ զննում	
124.	ՆՈՒՀ-ում իրականացվու՞մ են ներքոհիշյալ սանիտարահիգիենիկ միջոցառումները՝							
125.	սպասքի ախտահանում (լվանալ տաք ջրով, օճառով կամ լվացող նյութերով),				1	Հղում 3, կետ 74	Փաստաթղթային Վիզուալ զննում	
126.	սենյակի օդափոխում օրը 3 անգամ, 8-10 րոպե տևողությամբ:				1	Հղում 3, կետ 74	Փաստաթղթային Վիզուալ զննում	
127.	սենյակների խոնավ մաքրում օրը 2 անգամ:				1	Հղում 3, կետ 74	Փաստաթղթային Վիզուալ զննում	
128.	առողջ ապրելակերպի քարոզչություն և բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում:				1	Հղում 3, կետ 74	Փաստաթղթային Վիզուալ զննում	
129.	Հաստատության բուժաշխատողը				3	Հղում 4,	Հարցման,	

	տիրապետու՞մ է արդյոք տեղեկատվության այն մասին, որ հաստատության սաները, դաստիարակները, սպասարկող անձնակազմը, որոնք շփվել են մենինգակոկային վարակիչ հիվանդությամբ հիվանդի հետ ենթարկվել են մենինգակոկային վարակիչ հիվանդությունների նկատմամբ մանրէաբանական հետազոտության:					կետ 9	փաստաթղթային	
130.	Մենինգակոկային վարակի տարածուն ձևի, մենինգակոկային նազոֆարինգիտի ռեկոնվալեսցենտ սաները և աշխատողները հաճախու՞մ են Հաստատություն բուժման կուրսն ավարտելուց հետո 5 օրից ոչ շուտ՝ բացասական արդյունքով մեկանգամյա մանրէաբանական հետազոտությունից հետո:				3	Հղում 4 կետ 37	Հարցման, փաստաթղթային	
131.	Հաստատության բուժաշխատողը տիրապետու՞մ է արդյոք տարածուն ձևով մենինգակոկային վարակիչ հիվանդությունների ռեկոնվալեսցենտ հաստատության սանի կամ աշխատողի տեղամասային/ընտանեկան բժշկի և նյարդաբանի կողմից շարունակական (դիսպանսերային) հսկողության ենթարկվելու մասին տեղեկատվությանը:				1	Հղում 4, կետ 38	Հարցման, փաստաթղթային	
132.	Հաստատության բուժաշխատողը տիրապետու՞մ է արդյոք Հաստատությունում հիվանդի հետ շփված անձանց մանրէաբանական հետազոտությունների ժամանակ հայտնաբերված մենինգակոկակիրների տեղամասային բժշկի/վարակաբանի/ քիթ-կոկորդ-ականջի բժշկի կողմից առողջացման (սանացիա) ենթարկվելու մասին տեղեկատվությանը:				1	Հղում 4, կետ 48	Հարցման, տեսողական	
133.	Հաստատության բուժաշխատողը տիրապետու՞մ է արդյոք տեղեկատվությանը այն մասին , որ.							
134.	առողջացման կուրսն ավարտելուց 3 օր հետո մենինգակոկակիրները ենթարկվել են մեկանգամյա մանրէաբանական հետազոտության				1	Հղում 4, կետ 49	Հարցման, փաստաթղթային	

135.	թույլատրվե՞լ է նրանց հաստատություն հաճախումը միայն մանրէաբանական հետազոտության բացասական պատասխանի առկայության դեպքում:				3	Հղում 4, կետ 49	Հարցման, փաստաթղթային	
136.	Հաստատության բուժաշխատողը տիրապետու՞մ է արդյոք տեղեկատվությանը այն մասին , որ. տարածուն ձևով մենինգակոկային վարակիչ հիվանդությունների օջախում հայտնաբերված մանրէաբանորեն չհաստատված սուր նազոֆարինգիտով հիվանդները բուժվել են տեղամասային բժշկի/վարակաբանի/քիթ-կոկորդ-ականջի բժշկի կողմից:				1	Հղում 4, կետ 50	Հարցման, փաստաթղթային	
137.	Հաստատության բուժաշխատողը տեղյակ է արդյո՞ք, որ տարածուն ձևով մենինգակոկային վարակիչ հիվանդությունների օջախում հայտնաբերված մանրէաբանորեն չհաստատված սուր նազոֆարինգիտով հիվանդներին բուժման ընթացքում չի թույլատրվում հաճախել հաստատություն (հաճախումը վերսկսվու՞մ է սուր երևույթներն անցնելուց՝ բուժումից հետո):				3	Հղում 4, կետ 50	Հարցման, փաստաթղթային	

Հղում 1. «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմեր և կանոններ՝ Հաստատված է ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002 թ. N 857 հրամանով:
Հղում 2. «Վարակիչ հիվանդությունների «իրական ժամանակում» էլեկտրոնային համաճարակաբանական հսկողության» անիտարահամաճարակային նորմեր և կանոններ:
Հղում՝ 3. «Հայաստանի Հանրապետությունում գրիպի և սուր շնչառական վարակների համաճարակաբանական հսկողություն» սանիտարահամաճարակային նորմեր և կանոններ
Հղում՝ 4. ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. դեկտեմբերի 28-ի N 40-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մենիգակոկային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-016-10 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի կետ 9, 37, 38, 48, 49, 50:

<u>Ծանոթություն.</u>

Նշում 1. Մանկական նախադպրոցական օբյեկտներում երեխաների տարիքային խմբերը և տեղերի քանակը

Խմբերը	Տարիքը	Տեղերի քանակը խմբերում
<u>1. Մսուրային</u> Վաղ տարիքի առաջին խումբ	2 ամսականից մինչև 1 տարեկան	15

Վաղ տարիքի երկրորդ խումբ	1 տարեկանից մինչև 2 տարեկան	20
Կրտսեր տարիքի առաջին խումբ	2 տարեկանից մինչև 3 տարեկան	20
2. Նախադպրոցական Կրտսեր երկրորդ խումբ	3 տարեկանից մինչև 4 տարեկան	25
Միջին խումբ	4 տարեկանից մինչև 5 տարեկան	25
Ավագ խումբ	5 տարեկանից մինչև 6 տարեկան	25

Նշում 2. Մանկական մսուր-մանկապարտեզների շինությունների կառուցվածքը, կազմն ու մակերեսները

Տեղի անվանումը	ըստ խմբերի քանակի տեղերի մակերեսները (մ^2)					
	2 (50)	4 (95)	6 (140)	7 (190)	12 (280)	14 (330)
1. Մսուրային խմբեր ընդունարան	18	18	36/18x2	36/18x2	72/18x4	72/18x4
խաղասենյակ	50	50	100/50x2	100/50x2	200/50x4	200/50x4
ննջասենյակ	50	36	72/36x2	72/36x2	144/36x4	144/36x4
զուգարան	16	12	24/12x2	24/12x2	48/12x4	48/12x4
բուֆետային մաս	3	3	6/3x2	6/3x2	12/3x4	12/3x4
ընդամենը	137	119	238	238	476	476
2. Նախադպրոցական խմբեր						
հանդերձարան	18	54/18x3	72/18x4	108/18x6	144/18x8	180/18x10
խմբասենյակ	50	150/50x3	200/50x4	300/50x6	400/50x8	500/50x10
ննջասենյակ	50	150/50x3	200/50x4	300/50x6	400/50x8	500/50x10
զուգարան	16	48/16x3	64/16x4	96/16x6	128/16x8	160/16x10
բուֆետային մաս	3	9/3x3	12/3x4	18/3x6	24/3x8	30/3x10
ընդամենը	137	411	548	822	1096	1370

Նշում 3. Բուժական սենյակների կազմը և մակերեսները

Բուժ. կետ	Տեղերի մակերեսները մ^2 խմբերի դեպքում					
	2 (50)	4 (95)	6 (140)	7 (190)	12 (280)	14 (330)
Բժշկական սենյակ	6	8	8	8	10	10
բուժագործության սենյակ			-	8	8	8
Մեկուսարան ընդունարան	2	2	2	4	6	6
հիվանդասենյակ	6	6	6	6	12/6x12	12/6x12
զուգարան	2	2	2	2	4	4
ախտահանիչ միջոցների պատրաստման տեղ	-	2	2	2	2	2
Ընդամենը	16	20	20	30	42	42

Նշում 4. Լվացքատան կազմը և մակերեսները

Լվացքատուն	Տեղերի մակերեսները մ^2 խմբերի դեպքում					
	2 (50)	4 (95)	6 (140)	7 (190)	12 (280)	14 (330)
լվացարան	12	14	14	16	18	18
հարդուկի սենյակ	-	10	10	12	12	12
Ընդամենը	12	24	24	28	30	30

Նշում 5. Տարածքների օդի ջերությունը կախված տարածքի օգտագործման նպատակներից երեխաների տարիքից

Տարածքներ	Օդի ջերմաստիճանը °		
	1Ա,1Բ,1Գ կլիմ. ենթաշրջանում	2-րդ, 3-րդ կլիմ. շրջ. և 1Վ , 1Դ ենթաշրջ.	4-րդ կլիմայական շրջանում
1. Վաղ հասակի 1-ին խմբի խաղասենյակ, ընդունարան	24	3	22
2. Վաղ հասակի 2-րդ խմբի, փոքրերի 1-ին խմբի ընդունարան, խաղասենյակ	23	22	21
3. Նախադպրոցական խմբերի, 2-րդ փոքրերի, միջին և ավագ նախադպրոցական խմբերի հանդերձարան, խմբասենյակ	22 21	21 20	20 19
4. Ննջասենյակներ՝ մսուրային խումբ, նախադպրոցական խումբ	22 20	21 19	20 18
5. Սանհանգույց՝ մսուրային խումբ, նախադպրոցական խումբ	23 21	22 20	21 19
6. Մարմնամարզ. և երաժշտական պարապմունքների դահլիճ	20	19	18
7. Բուֆետային մասեր	16	16	16
8. Զբոսանքի պատշգամբ	-	-	-
9. Լողավազանի շինություն	29	29	29
10. Բժշկի սենյակ	23	22	21
11. Ծառայողակենցաղային շինություն	20	18	17
12. Խոհանոց	15	15	15
13. Լվացքատուն	18	18	18
14. Արդուկի սենյակ	16	16	16
15. Ջեռուցվող անցումներ	15	15	15

Նշում 6. Փակ տարածքում երեխաների հագուստը, չափավոր շարժման ակտիվության դեպքում, կախված օդի ջերմաստիճանից

Օդի ջերմաստիճանը	Հագուստ	Մարմնի շրջանում թույլատրվող հագուստի շերտերը
16-17^0	Բամբակյա սպիտակեղեն, բրդյա կամ բամբակյա խիտ գործվածքից զգեստ, տրիկոտաժից վերնազգեստ, զուգագուլպաներ (ոտքերին կոշիկներ կամ տաք հողաթափեր)	3-4
18-20^0	Բամբակյա սպիտակեղեն, հաստ բամբակյա կամ կիսաբրդյա գործվածքից զգեստ, զուգագուլպաներ, ավագ նախադպրոցական երեխաներին կիսագուլպաներ (ոտքերին կոշիկներ)	2-3
21-22^0	Բամբակյա սպիտակեղեն, գործվածքից զգեստ, կարճ թևերով (ոտքերին թեթև կոշիկներ կամ բոկոտիկներ)	2
23^0 և բարձր	Բարակ բամբակյա սպիտակեղեն կամ առանց սպիտակեղենի, թեթև զգեստ՝ ամառային, առանց թևերի, նասկի (ոտքերին բոկոտիկներ)	1-2

Նշում 7. Մսուրային հասակի երեխաների համար սեղանների և աթոռների չափսերը

Կահույքի խումբը	Մակնշող գույնը	Երեխաների հասակային խումբը	Սեղանի բարձրու-	Աթոռի հենակի բարձրությունը սմ	Երեխաների հասակը (տարիքը) հասակային

			թյունը սմ		խմբերով
Ա	սպիտակ	մինչև 80	34	17	7ամս.-1տ. 8ամս.
Բ	կանաչ	80-90	38	20	1տ.5ամս.-2տ.8ամս.
Ծ	երկնագույն	90-100	43	24	2-4տ.
Գ	նարնջագույն	100-115	48	28	3-6տ.
Դ	դեղին	115-130	54	32	5-7տ.
Ժ	կարմիր	130-ից բարձր	60	36	6-7տ.

Նշում 8. Սեղանների կողմնորոշիչ քանակը (համարիչ) և աթոռների (հայտարար) չափսերը տարբեր հասակային խմբերի համար

Կահույքի խումբը	Տարիքային խմբեր						
	Մսուրային				Նախադպրոցական		
	վաղ հասակի 1-ին խումբ	վաղ հասակի 2-րդ խումբ	փոքրերի 1-ին խումբ	փոքրերի 2-րդ խումբ	միջին խումբ	ավագ խումբ	նախապատ-րաստական
	սեղաններ 4 տեղանի					երկտեղանի	
Ա	1/4	1/4					
Բ		1/16	2/8				
Ծ			3/12	3/12			
Գ				4/16	1/2*//4	9/18	2/4
Դ					6/11*//22	4/18	10/20
Ժ							1/2

Նշում 9. Զբոսանքի ժամանակ երեխաների շարժման ակտիվության ապահովման ռացիոնալ հագուստը

Եղանակ	Գործունեության տեսակ	Արտաքին հագուստ	Շերտերի ընդհանուր քանակ
-3-3° քամին մինչև 2 մ/վ	շարժուն խաղեր	Դահուկային զգեստ	3
քամին մինչև 3-7 մ/վ	-;;-	Դահուկային զգեստ, քամիապաշտպան բաճկոն	4
-3-3° քամին մինչև 2 մ/վ	միջին շարժունակության խաղ	Տաք բաճկոն անդրավարտիքով	4
քամին մինչև 3-7 մ/վ	-;;-	-;;-	4
-4-10° քամին մինչև 2 մ/վ	-;;-	Ձմեռային վերարկու, մուշտակ	3
քամին մինչև 3-7 մ/վ	-;;-	-;;-	5 4
-11-15° քամին մինչև 2 մ/վ	-;;-	-;;-	5 4
քամին մինչև 3-7 մ/վ	շարժուն խաղեր արագ քայլ	ձմեռային վերարկու, մուշտակ	5 4
-16-20° քամին մինչև 2 մ/վ	-;;-	-;;-	5 4
քամին մինչև 3-7 մ/վ	-;;-	մուշտակ	5

Նշում 10. Ֆիզիկական դաստիարակության պարապմունքների տեսակները և աշխատանքների ձևերը

	Պարապմունքի	Հասակային խմբերը, կազմակերպման առանձնահատկությունները և պարապմունքների

	տեսակը և աշխատանքի ձևերը	երկարատևությունը						
		Վաղ հասակի 1-ին խումբ	Վաղ հասակի 2-րդ խումբ	1-ին փոքր խումբ	2-րդ փոքր խումբ	միջին խումբ	ավագների խումբ	դպրոցի նախապատ-րաստական խումբ
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1	Ուսուցողական աշխատանք (ֆիզկուլտուրայի պարապմունքներ)	Ամեն օր անհատական կամ փոքր խմբերով խաղապարապմունքներ շարժումների զարգացման ուղղությամբ, մերսում, մարմնամարզություն 6-10 րոպե՝ հաշվի առնելով տարիքը, ֆիզիկական վիճակը, երեխայի զարգացման առանձնահատ-կությունները	շաբաթը 2 անգամ, ենթախմբերով (1տ. 6 ամս.1տ. 8ամս., 2-4 երեխա, մինչև 2 տ.՝ 5-7 երեխա) Տևողությունը 10-15 րոպե	շաբաթը 2 անգամ, ենթախմբերով, տարեվերջին՝ խմբի ողջ կազմով, 15-20 րոպե	Բոլոր երեխաների հետ շաբաթը 3 անգամ, այդ թվում՝ 2-ը պարապմունքների համար նախատեսված ժամով, իսկ 1-ը՝ զբոսանքների ժամանակ: 15-20 րոպե, 20-25 րոպե, 25-30 րոպե, 30-35 րոպե			
2	Օրվա վերջում ֆիզ. առողջարարական աշխատանք	-	-	ամեն օր	ամեն օր	ամեն օր	ամեն օր	ամեն օր
	ա) առավոտյան մարմնամարզություն			4-5 րոպե	4-5 րոպե	6-8 րոպե	8-10 րոպե	10-12 րոպե
	բ) աշխույժ խաղեր և ֆիզ. վարժություններ զբոս. ժամանակ	անհատական	Ամեն օր 2 անգամ (առավոտյան և երեկոյան զբոսանքի ժ-կ)					
			8-10րոպե	10-15 րոպե	15-20 րոպե	20-25 րոպե	25-30 րոպե	30-40 րոպե
			Ֆիզկուլտ պարապմունքների անցկացման ժամանակ					
			-	6-8 րոպե	6-8 րոպե	8-10 րոպե	10-12 րոպե	12-15 րոպե
			-	5-10 րոպե	5-10 րոպե	8-12 րոպե	10-15 րոպե	10-15 րոպե
	գ) մարմնամ. րոպե		-	-	-	-	Ամեն օր անհրաժեշտության դեպքում 1-3 րոպե, կախված պարապմունքի ձևից ու բովանդակութ-ից	
3	Ակտիվ հանգիստ ա) ֆիզ. ժամ. անց.				Ամիսը 1-2 անգամ 20-30 րոպե, 20-30 րոպե, 30-45 րոպե, 45-50 րոպե,			
	բ) ֆիզ. կոն	-	-	-	ոչ քիչ տարին 2 անգամ մինչև 60 րոպե		Տարին 2-3 անգամ 1 ժամ 30 րոպե	
	գ) առողջության օր	-	-	-	Եռամսյակը մեկ անգամից ոչ քիչ			
4	Երեխաների ինքնուրույն շարժող. գործունեություն	-	-	-	Ամեն օր: Բնույթը և տևողությունը կախված է երեխայի անհատական տվյալներից ու պահանջներից: Առավոտյան մարմնամարզությունը և ֆիզ. վարժությունները կատարվում են ծնող. հսկողությամբ և նրանց հետ:			
5	Տնային	Առաջադրանքները որոշում է դաստիարակը						

	հանձնարարություն	

Նշում 11. ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման **«**Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության, և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացուցակի ձևերը հաստատելու մասին» Հավելված N2-ի աղյուսակի 9-րդ հորիզոնական՝ «Ուսումնադաստիարակչական հիմնարկների (բուհեր, հանրակրթական դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, մարզադպրոցներ, ուսումնարաններ, նախամասնագիտական և մասնագիտական կրթության կազմակերպություններ, արվեստի դպրոցներ, համակարգչային ուսուցման դասընթացներ) աշխատողներ, ովքեր առնչվում են ուսումնադաստիարակչական աշխատանքներին»:

Տեսուչի ստորագրությունը _____ Տնտեսվարողի ստորագրությունը _____